Արձանագրություն N 3

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք.Երևան **<< 06>> 03. 2026թ. ժամը 10:00**

Մասնակցում էին՝

- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության կոմունալ շահագործման բաժնի պետի պարտականությունները կատարող Ի. Սաֆարյան (հանձնաժողովի նախագահ),
- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության կոմունալ շահագործման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Ստեփանյան (գնահատող անդամ),
- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության կոմունալ շահագործման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Ղազարյան (գնահատող անդամ),
- Գնումներ համակարգող՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ասատրյան (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

Օրակարգ՝

ՀՀ ՆԳՆ կարիքների համար կենցաղային և հանրային սննդի նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-17 ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստում արձանագրվեց՝

1. **Տեղեկություն ընթացակարգի ընթացքի մասին.**

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-17 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են ներկայացված հայտերը: 2,16,17,23,35,44,45,50 չափաբաժինների մասով ընթացակարգը չի կայացել՝ նախահաշվային գների գերազանցման պատճառով:

Սամվել Զիթչյան ՍՊԸ-ի կողմից ներկայացված 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում բացակայում է ապրանքի ֆիրմային անվանումը;

Խարազյան Գրուպ ՍՊԸ-ի հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող կայքէջի հղումը, ինչպես նաև 7-8-րդ չափաբաժինների հայտերում բացակայում են ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, տեխնիկական բնութագիրը;

ԱՐՍՍՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի հայտում 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում բացակայում է ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը;

ԻՅԱՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում 10-րդ չափաբաժնում արտադրողի անվանումը նշված է սխալ, անհրաժեշտ է հստակ նշել տվյալ ապրանքատեսակն արտադրող ընկերության անվանումը:
«Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում 12,14,20,34,43 չափաբաժիններում բացակայում են ապրանքների ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, արտադրողի անվանումները:
ԱՁ Նաիրի Թորոսյանի կողմից ներկայացված հայտում 37,39,40 չափաբաժիններում բացակայում են ապրանքների ապրանքային նշանները, ինչպես նաև անհրաժեշտ է հստակեցնել արդյո՞ք ԱՁ Նաիրի Թորոսյանը հանդիսանում է Պեգան լատեքսային ներկերի արտադրող, եթե ոչ, ապա արտադրողի անվանումը ևս շտկման ենթակա է:
Մնացած չափաբաժինների մասով հայտերը գնահատվում են բավարար:

Հանձնաժողովը որոշեց՝

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատման նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել Սամվել Չիթչյան ՍՊԸ-ին, Խարազյան Գրուպ ՍՊԸ -ին, ԱՐՍՍՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին, ԻՅԱՆ ՍՊԸ-ին, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին, ԱՁ Նաիրի Թորոսյանին 1 աշխատանքային օրվա ընթացքում կատարել համապատասխան շտկումները:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ի. Սաֆարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Ստեփանյան

Ա. Ղազարյան

Քարտուղար՝ Հ. Ասատրյան